



## Ա. ԷԶՄԻԾԺՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄՄՐԱՆԻ 1955—1956 ՈՒՍՈՒՄՆԱԿՅՆ ՏԱՐԵԾԲԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Հոկտեմբերի 17-ին, երկուշաբթի առավոտ, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. ի բարձր հովանավորությամբ կատարվեց Հոգևոր Ճեմմարանի ընթացիկ ուսումնական տարեշրջանի բացումը, որ կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ սեպտեմբերի 1-ից փոխադրվել էր հոկտեմբերի 17-ին:

Հոգևոր Ճեմմարանը դարձել էր մտքի ու հոգու խսկական կենտրոն: Այնտեղ էր Վեհափառ Հայրապետը, այնտեղ էին Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամները՝ գերազնորդ Տ. Մահակ եպիսկոպոսը, Տ. Եղիշիկ եպիսկոպոսը, Տ. Վարդան եպիսկոպոսը, միաբանության անդամ վարդապետներ, աբեղաներ, քահանաներ, դպիրներ, դասախոսներ և ուսանողներ:

Վեհափառ Հայրապետի և Հոգևորական ուղեկիցների Ճեմմարան մուտքը տեղի ունեցավ որոտագին ծափահարությունների մեջ: Ապա, հավաքված ընդարձակ դասարանում, կատարվեցին մաղթանք, օրհնյալ շրով օրհնություն Հոգևոր Ճեմմարանի շորս ծագերի և կրոնական պատշաճ արարողություն, որից հետո վերատեսուշ պ. Մարտիրոս Տեր-Մատիանյանը, կարճ և կուռ ուղերձով խընդրեց նորին Վեհափառության՝ տալ Հայրապետական օրհնությունը, որպեսզի աստվածա-

յին շնորհն ու պաշտպանությունն անպակաս լինեն Հոգևոր Ճեմմարանի վրա, որպեսզի ուսանողների և ուսուցիչների աշխատանքը կատարվի խաղաղությամբ և արդյունաշատ՝ հօգուտ Հայաստանյաց Առաքելական եկեղեցու և Հայ ժողովրդի:

Վեհափառ Հայրապետին ուղյալ գրավոր ուղերձով Գ դասարանի ուսանող Սանդրո Բեհրուզյանը (ուկարանկիր դպիր) Ճեմմարանի ուսանողության անոմից կարդաց ուղերձ ուղղված Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս և Սայրագույն Պատրիարք Տ. Տ. Վազգեն Ա. ին:

Վեհափառ Հայրապետը, ի պատասխան ուղերձների խոսած բովանդակալից ճառով, նշելուց հետո, թե ինքն էլ անցյալում եղել է մանկավարժ ուսուցիչ և սիրել գիրն ու գրականությունը, դպրոցը, աշակերտներին, խոսքն ուղղեց Ճեմմարանի ուսանողներին և այսպես խրատեց. «Պետք է սիրել այն դորձը, որին լծվել եք: Պետք է սիրել այն նպատակը, որին հետամուտ եք: Պետք է սիրել Հայաստանյաց Եկեղեցին, որին ապագա ծառայողները պիտի լինեք իզուր է եկել և Հոգևոր Ճեմմարան ընդունվել այն երիտասարդը, որ սեր չունի իր լծված աշխատանքի, իր հետամտած իդեալի՝ ծառայել Եկեղեցու և Հոգևոր Ճեմմարանի՝ արտաքինով համեստ,

բայց կողումով մեծ այս հաստատության հանդեպունքը Հոգևոր կոչման վեհությունն ու նվիրականությունը բացատրելուց հետո, Վեհափառ Հայրապետն այսպես եղրափակեց իր իմաստալից խրատականը:

«Եթե այսօր երգով ու աղոթքով կատարեցինք Հոգևոր Ճեմարանի 1955—1956 ուսումնական տարեշրջանի բացումը, դա ձեւականություն չէ: Մենք հավատում ենք, որ մեր գործը սուրբ է և նվիրական: Մենք այդ սուրբ և նվիրական գործը սկսեցինք մաղթանքով, երգով և աղոթքով, այն հաստատ հավատով, որ Աստված շնորհներ պիտի տա և Դուք պիտի դառնաք Քրիստոսի ճշմարիտ աշակերտները, Հայ Եկեղեցու հավատարիմ սպասար-

կողները, Հայ հավատացյալ ժողովրդին միմիթարություն բաշխող վեհանձն հոգևորականները:»

Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ և Մայր Տաճարի ավագ լուսարար գերազնորհ Տ. Սահակ Կապիսկուպոս Տեր-Հովհաննիսյանի քաջալերական խոսքերից հետո Նորին Ս. Օծություն Վեհափառ Կաթողիկոսը տվեց իր Հայրապետական օրհնությունը Հոգևոր Ճեմարանի ուսանողության, ուսուցչական կազմին և վերատեսչության: Հանդեսը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչը ու ուսանողների երգած «Եղ Միածինն ի հօրէ» շարականով:

ՃԵՄԱՐԱՆԱՍՆԵՐ

